Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Ն. Գետաշենի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջն. դպրոց

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչ՝ Նարինե Գրիգորյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 3

Գլուխ 1. Գնահատում, գնահատման նպատակները ---------- 4

Գլուխ 2. Գնահատման ձևերն ու առանձնահատկությունները --------- 10

Գլուխ 3.Գնահատման գործիքների կիրառումը դասավանդման շրջանակներում ---------- 14

Եզրակացություն ---------- 16

Օգտագործված գրականության ցանկ ---------- 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հանրակրթական դպրոցում առկա են բազմաթիվ խնդիրներ։ Դրանցից է ուսումնական գործընթացում գնահատման դերն ու առանձնահատկությունը։ Գնահատման խնդիրը ժամանակակից դպրոցի ամենաբարդ խնդիրներից մեկն է։ Սովորողների կարծիքով իրենց իրավունքների ոտնահարման դեպքերը ամենից հաճախ կապվում են չհիմնավորված գնահատման հետ։ Երբեմն սովորողները դժգոհում են, որ գնահատման չափանիշները հստակ չեն, նախապես հայտնի չեն լինում իրենց, ահա թե ինչու անհրաժեշտ է, որ հստակ սահմանվեն գնահատման չափանիշները։ Սովորողի ձեռքբերումների վրա հիմնված գնահատումը կազմված է ընդարձակ պատասխան պահանջող մի շարք առաջադրանքներից։ Հանրակրթության մեջ կա գնահատման միասնական համակարգ։ Միավորային գնահատումը ամբողջությամբ չի բացահայտում աշակերտի ձեռք բերած գիտելիքը և դժվար է ասել՝ ճիշտ է միավորային գնահատման սկզբունքը։ Միավորները չեն կարող ամբողջությամբ վեր հանել այն ամբողջ տեղեկատվությունը, որն ունի երեխան։
Եթե մենք ուզում ենք արդյունավետ, խելամիտ գնահատում մշակել, որը կնպաստի իրազեկված, շրջահայաց ու լրջմիտ քաղաքացիներ դաստիարակելու խնդրին, ապա պետք է կիրառենք գնահատման տարբեր ձևեր։

ԳԼՈՒԽ 1

ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Գնահատումը ուսումնառության ակտիվ գործընթաց է: Ուսումնական գործընթացում սովորողի ձեռքբերումներն ուսուցիչն ամրագրում է գնահատման գործընթացով: Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման և տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի վերահսկումը: Գնահատումը տեղեկատվություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վրահսկելու գործընթաց է: Գնահատվում են հանրակրթության արդյունքները: Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է, այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակը, նրանց արժեքային համակարգը: Գնահատումը առավել ընդհանուր բնորոշմամբ կարող ենք ձևակերպել, որ այն պարբերական գործընթաց է, որը որոշում է ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների արժեքներն ու նշանակությունը:

Գնահատման մեջ երկու կարևոր սկզբունք կա. այն պետք է հիմնավորվի առաջադրված նպատակներով և ցույց տա դրանց հաջողության աստիճանը: Գնահատումը պետք է ձգտի առավելագույն օբյեկտիվության:

Կարելի է ասել կրթության մեջ գնահատման գործընթացը նրա բոլոր մասնակիցների (ուսուցիչների և աշակերտների) բաց համաձայնագիրն է: Գնահատումը որոակական (մակարդակային) և քանակական (միավորներով) դրսևորումներ ունի: Գնահատվում են ինչպես գործընթացները, այնպես էլ այդ գործընթացների արդյունքները: Գնահատման կարևոր խնդիրներից մեկը նրա ինքնանպատակ չլինելն է: Գնահատականը պետք է նպատակաուղղված լինի սովորողի ինչպես կրթական, այնպես էլ անհատական կարողությունների զարգացմանը:

Աշակերտին գնահատելիս պետք է հիմնվել անհատական համեմատական կողմնորոշման վրա՝ աշակերտի առաջընթացը, զարգացման առանձնահատկությունները, ուսումնական գործընթացի յուրահատկությունները, համեմատել ոչ թե մյուս աշակերտների, այլ հենց իրենց հետ։

Գնահատելիս անհրաժեշտ է առաջնորդվել լավատեսական մոտեցմամբ՝ հաշվի առնելով յուրաքնաչյուր աշակերտից ակնկալվող ուսումնական հաջողությունները և գնահատել նույնիսկ ամենափոքր դրական առաջընթացը։ Գնահատականը պետք է օգտագործել որպես հետադարձ կապ, որն անհրաժեշտ է աշակերտի աշխատանքի արդյունավետությունը գնահատելու, այլ ոչ թե նրան խիստ վերահսկողության տակ առնելու կամ ճնշելու համար։

Պետք է գնահատել ոչ միայն սովորողի վերջնական արդյունքը, այլ ուսումնական գործընթացում սովորողների աշխատանքը, որը կարելի է կազմակերպել բովանդակային ծավալուն գնահատականի օգտագործմամբ։

Սովորողներին անհրաժեշտ է մասնակից դարձնել գնահատման գործընթացին, նրանց սովորեցնել գնահատել ինչպես սեփական, այնպես էլ ընկերների աշխատանքը, համատեղ մշակել գնահատման չափանիշներ, աշակերտների մեջ ձևավորել ինքնավերահսկման կարողություններ։

Գնահատումը պետք է մոտ լինի իրական կյանքին, այն պետք է հիմնվի առօրյա կյանքից վերցված կամ այդպիսի ենթատեքստ ունեցող իրադրությունների վրա։ Գնահատման ժամանակ պետք է օգտագործվեն այլընտրանքային և համակցված եղանակներ։ Սովորողը պետք է իմանա, թե ինչու և ինչ չափանիշներով է գնահատվում։

Գնահատման գործընթացը կենտրոնական տեղ է զբաղեցնում ՀՊՉ նպատակներում՝ սովորողների գործունեությանը նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպելու ուսուցման հինգ հիմնական տարրերին համապատասխան.

- գիտելիքների ձեռքբերում,
- հասկացությունների իմաստավում,
- կարողությունների զարգացում,

- վերաբերմունքի, արժեքների ձևավորում,
- գործողությունների (արարքների ձեռնարկում)։

Գնահատումը համագործակցային և տեղեկատվական գործընթաց է, որն ընդգրկում է ողջ դպրոցական համայնքը՝ սովորողներ, ընտանիքներ, ուսուցիչներ։

Սովորողների ուսումնառությունը կազմակերպվում է ուսումնական գործընթացի պլանավորման և կատարելագործման միջոցով՝ ուղղված նրանց անհատական կամ խմբի պահանջներին։

Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը։ Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները։

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1. հայտորոշիչ գնահատում,
2. ձևավորող գնահատում,
3. ամփոփիչ (միավորային) գնահատում։

1.1 Հայտորոշիչ գնահատում

Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ։

Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ։ Հայտորոշիչ գնահատումը իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային ու անհատական առանձնահատկություններից։

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը։ Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝ թեստային կամ գրավոր այլ աշխատանք, բանավոր հարցում, բաց հարցերով քննարկում։

1.2 Ձևավորող գնահատում

Ձևավորող գնահատումը ուսուցչին հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները։

Ձձավորող գնահատումը ապահովում է հետադարձ կապ ուսումնական գործընթացում, որի արդյունքների հիման վրա իրականացվում են աշխատանքներ յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի առաջադիմության բարելավման ուղղությամբ։ Ձևավորող գնահատումը կարող է իրականացվել թեստերի, բանավոր հարցումների, գործնական աշխատանքների, տնային աշխատանքների միջոցով։ Ձևավորող գնահատման ժամանակ օգտագործվում են սովորողի առաջընթացը բնութագրող որակավորումներ, վերլուծություններ և մեկնաբանություններ։

Ձևավորող գնահատման բաղադրիչներն են.

- սովորողների գործուն մասնակցությունը սեփական ուսումնառությանը,
- ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,
- սովորողների ուսումնառության գործընթացի շտկում,
- սովորողների մոտիվացիայի ապահովում,
- հետադարձ կապի ապահովում։

Ձևավորող գնահատումը իրականացվում է ուսուցման ողջ ընթացքում։ Այս գնահատմանը մասնակցում են, թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողը։ Գնահատման արդյունքում տրվում է սովորողի բնութագիրը։ Ձևավորման գնահատման միջոցով բացահայտվում է սովորողի ուժեղ և թույլ կողմերը, բարելավում է ուսուցման և ուսումնառության գործընթացը։ Ձևավորող գնահատումը իրականացվում է տարբեր ձևավորման գնահատման գործիքներով։ Ձևավորող գնահատման մեջ ակտիվ դերակատար է սովորողը, նա պետք է ակտիվ դեր ստանձնի իր կրթության գործում։ Ձևավորող գնահատման մեջ սովորողը նպատակային սովորում է սովորել։ Ձևավորող գնահատման տարբեր գործիքների կիրառմամբ խրախուսվում է սովորողի

ներգրավումը ուսումնական գործընթացում: Այս գնահատման միջոցով ուսուցիչը և սովորողը միասին պարզում են, թե որտեղ են իրենք գտնվում և ինչ պետք է անեն նպատակին հասնելու համար: Ձևավորող գնահատումը ունի նաև մեծ առավելություն այն առումով, որ ունի բազում կրթական նոր մեթոդներ ու հնարներ: Դրանք են՝ ջերմաչափումը, հարցադարանը, գիտելիքների բուրգը, արտաքին և ներքին շրջաններ, չորս անկյուններ, ելքի քարտեր: Ձևավորող գնահատումը իրականացնելիս անհրաժեշտ է վեր հանել սովորողների կարիքները.

- Յուրացրե՞լ են թեման, թե՞ ոչ:
- Կարելի՞ է արդյոք անցնել մյուս բաժինն ուսումնասիրելուն:
- Ո՞վ ունի լրացուցիչ օգնության կարիք:
- Ի՞նչը պետք է փոխել կամ վերանայել դասի պլանավորման և դասավանդման մեթոդիկայում:

Արդյունավետ ուսումնառություն ապահովելու համար կարևոր է դասի ճիշտ սկիզբ և ավարտ ստեղծելը: Այն իրականացնում ենք մուտքի և ելքի քարտերով:

Մուտքի քարտի ժամանակ ձևակերպում ենք կարճ հարցեր նախորդ թեմայի վերաբերյալ, ելքի քարտի ժամանակ օգտագործում ենք կարճ հարցադրումներ նոր թեմայի վերաբերյալ: Գնահատման կիրառվող ձևերը պետք է հնարավորություն ընձեռեն լիարժեք չափելու սովորողի ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Դասավանդման գործընթացում կիրառելով ձևավորող գնահատման բազմազան գործիքներ՝ կարելի է բացահայտել սովորողի ամբողջ ներուժը:

1.3 Միավորային գնահատում

Միավորային գնահատումը իրականացվում է ուսուցման ավարտին: Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է տարեկան ամփոփիչ գնահատականը:

Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման տասը միավորային սանդղակ: Միավորային

գնահատումը ձևավորվում է բանավոր հարցման արդյունքում, գործնական աշխատանքների արդյունքում և թեմատիկ գրավոր աշխատանքների արդյունքում։

ԳԼՈՒԽ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գնահատումը բազմաբնույթ հասկացություն է, որը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց, որն օգտագործվում է սովորողների ուսումնառության առարկայական ծրագրերի և պլանների ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելու համար։ Գնահատումը որպես գործընթաց դասարանում նշանակում է նաև քանակական և որակական տվյալների նպատակային հավաքում։ Ուսուցիչների համար գնահատման նպատակը սովորողների մասին որոշում կայացնելն է թե՛ որպես խումբ, թե՛ որպես անհատ։ Դասարանում գնահատումը ենթադրում է սովորողների կողմից առաջադրանքների կատարումը զանազան միջավայրերում և համատեքստերում։ Սովորողները կարող են իմանալ, թե իրենց ինչի համար են գնահատում, կամ գնահատումը կարող է լինել դասավանդման հետ միաձույլ՝ աշակերտների կողմից ընկալվելով որպես ընդամենը իրենց սովորոածի մեջ գործնականում վարժվելու հնարավորություն։ Գնահատման մասին խոսելիս պետք է սկսել ուսումնական նպատակներից։ Ուսումնական նպատակների մասին խոսելիս մանկավարժները հաճախ մեջ են բերում Սենեկայի հետևյալ միտքը. «Եթե մարդ չգիտի, թե որ նավահանգիստն է նավարկում, ապա նրա համար ոչ մի քամի էլ նպաստավոր չէ»։

Ուսումնական նպատակները հիմք են ապահովում հակասությունների լուծման համար։ Հակասություններն աշակերտների միջև, ինչպես նաև սովորողների և դասավանդողների միջև լուծվում են նաև այն հիմունքով, թե սովորողներն ու ուսուցիչներն ինչի են ուզում հասնել։ Ուսումնական նպատակները գնահատման անհրաժեշտ պայման են։ Առանց հասկանալու, թե ինչն է տվյալ աշխատանքի նպատակը, ոչ մի գնահատում չի կարող իրականացվել։ Գնահատումը սկսվում է նպատակների սահմանումով, շարունակվում է առաջադիմության ստուգումներով և ավարտվում է այն բանի արժևորումով, թե ինչ չափով են նպատակաները իրականացվել։ Գնահատման ձևերից կարևոր է ուսուցողական գնահատումը, որը

խիստ արդյաւունավետ է աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու առումով։ Ուսուցողական գնահատումը բարելավում է աշակերտների արդյունքների համաչափությունը։ Ուսուցողական գնահատման միջոցով ձևավորվում են «սովորել սովորելու» հմտությունները։ Այն նաև զարգացնում է աշակերտի՝ համադասարանցիներին և ինքն իրեն գնահատելու հմտությունները։ Գնահատման գործընթացի նպատակն է՝ գնահատել այն, ինչ ուսուցանվել է։

Գնահատման սկզբունքներից է օբյեկտիվ գնահատումը։ Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերունքից, օրինակ պատասխանի ընտրությամբ առաջադրանքներ (թեստեր)։ Գնահատումը սուբյեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական դատողություններից, սկզբունքներից ու վերաբերմունքից։ Սուբյեկտիվ են համարվում բանավոր հարցումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները, կամ որոշ գործնական աշխատանքներ։

Քանի որ գնահատման գործիքները բազմազան են, ցանկալի արդյունքի հասնելու համար կարելի է կիրառել ձևավորող գնահատման ոչ ժամանակատար ամենօրյա գործածության համապատասխան գաղափարներ։ Օրինակ կարևոր է դասի առաջին և վերջին հինգ րոպեները տրամադրել կարճ հարցադրումների համար։ Եթե էլեկտրոնային ռեսուրսներ կան դասարանում՝ հարցադրումները այդ հարթակում կկիրառենք, այլապես սովորողները փոքրիկ թերթիկների վրա կգրեն յուրացրած և ոչ այնքան լավ յուրացրած հարցերը, գաղափարները և կգցեն երկու տարբերակված արկղիկների մեջ։ Այնուհետև դրանք ընթերցելով ուսուցիչը կհասկանա իր հաջորդ քայլերը։ Դասի ավարտին սովորողները կարող են նշել երեք բան, որ յուրացրել են, երկու բան, որոնց մասին կուզենային ավելին իմանալ, մեկ բան, որ չեն հասկացել։ Որի քննարկման արդյունքում կպարզաբանվեն բոլոր հարցերը։

Քանի որ ուսումնառության արդյունքը ապահովվում է ամփոփիչ գնահատմամբ, որը սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է, ապա միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ։ Միավորային գնահատումը պետք հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական

կարողությունները: Միավորային գնահատման համար մենք դասարանում կիրառում ենք.

- Բանավոր հարցում
- Գործնական աշխատանք
- Թեմատիկ աշխատանք

Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել սովորողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական:

Սովորողի ուսումնառության արդյունքների միավորային գնահատման ենթակա բանավոր, գրավոր և գործնական աշխատանքների ստուգումից ստացված արդյունքների միավորների բնութագրիչները սահմանված են ՀՊՉ պահանջներին համապատասխան:

2.2 Հայտորոշիչ, ձևավորող և միավորային գնահատում իրականացվում է նաև ԿԱՊԿ սովորողների համար: ԿԱՊԿ սովորողների կրթության իրավունքի իրացման գործընթացը հիմնվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա:

Ներառական կրթությունը ենթադրում է բոլոր՝ այդ թվում ԿԱՊԿ սովորողների կարողությունների լիարժեք բացահայտմանը, արդյունավետ գնահատմանը: Քանի որ ԿԱՊԿ սովորողները ներառվում են ուսումնական գործընթացում՝ նրանց գնահատումը ևս պետք է իրականացվի առանց խտրականության՝ օգտագործելով միավորային գնահատման համապատասխան տեսակները (կախված ներառման կարիքից) և գնահատման տասը միավորային սանդղակը: Հաշվի առնելով ԿԱՊԿ սովորողների առանձնահատկությունները, ուսումնական ձեռքբերումների ստուգման և գնահատման միջոցները հարմարեցվում են նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողունակություններին: Առաջադրանքները ԿԱՊԿ յուրաքանչյուր սովորողի համար կարելի է կազմել՝ դրանք հարմարեցնելով այդ սովորողների կարիքներին՝ ըստ անհրաժեշտության ապահովելով լրացուցիչ ժամանակ, հանգստանալու ընդմիջումներ: Սովորողը կարող է իր պատասխանը գրի առնել

համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցով (հնարավորության դեպքում)։ Գնահատման և գրանցման համար կիրառելի են ստուգաթերթեր, թեստեր, որոնք պարունակում են չափորոշչային նվազագույն պահանջների տրոհված մասերին համապատասխանող առաջադրանքներ։

Գնահատման գործընթացը պետք է պայմաններ ընձեռի սովորողներին իրենց գիտելիքների և ներուժի արտահայտման համար։ Կարևոր է, որ գնահատումն իրականացվի սովորողի համար անմիջական, հանգիստ և բնական պայմաններում։ Այն պետք է հնարավորություն ընձեռի սովորողի նկատմամբ արդար վերաբերմունքի դրսևորման համար, հիմնված պետք է լինի հավասարության սկզբունքի և օբյեկտիվ գնահատման հիմքի վրա։ ԿԱՊԿ սովորողի միավորային գնահատման կիրառման քանակները կախված տվյալ սովորողի կարիքի առանձնահատկություններից, կարելի է հասցնել թույլատրելի նվազագույն քանակներին։

ԳԼՈՒԽ 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հաշվի առնելով սովորողների հոգեբանական, մարդկային, տարիքային առանձնահատկությունները, դասավանդման գործընթացում ձեռքբերած փորձը հասկանում եմ, որքան կարևոր է ճիշտ և օբյեկտիվ գնահատումը։ Հետազոտության նպատակն է յուրաքանչյուր դասի ժամանակ իրականացնել գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերման նպատակները՝ թեմայի շրջանակներում և օբյեկտիվ ու չափելի գնահատման շնորհիվ խրախուսել ու ոգևորել սովորողներին։ Սովորողները ուսուցչի բանավոր հարցադրումների, գրավոր առաջադրանքների և գործնական աշխատանքների արդյունքում կկարողանան տեսնել իրենց առաջընթացը դասընթացում՝ հայոց լեզվի և գրականության դասերին։ Ելնելով ամենօրյա ուսումնական գործընթացից կարող ենք ասել, որ գնահատումըանխուսափելիորեն ազդում է ուսումնական գործընթացի վրա՝ թե՛ դրական, թե՛ բացասական առումներով։ Ուստի ներկայացվող նյութը դասավանդման ընթացքում պետք է ծառայի իր նպատակին և գնահատումը միայն պետք է նպաստի գիտելիքների ձեռբերմանը։ Թեմայի գերխնդիրներից է ճիշտ օգտագործել և՛ հայտորոշիչ, և՛ ձևավորող, և՛ միավորային գնահատման ձևերը աշակերտի մեջ

արժեհամակարգի ձևավորման, ուսումնական մակարդակի բարձրացման, միջանձնային հարաբերությունների, աշակերտի անհատականությունը պահելու համար: Հետազոտության մեթոդները ցույց են տվել, որ գնահատման լավագույն ձևերից են ինքնագնահատումը, փոխադարձ գնահատումը, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին ճիշտ բացահայտելու իրենց գիտելիքի չափը, ընդունելու համադասարանցիների գնահատումները: Երբ ուսուցիչը տվյալ աշակերտին գնահատելուց առաջ դասարանում հարցնում է, թե ինչ բացթողումներ արեց աշակերտը, ո՞ր հարցադրմանը չանդրադարձավ, աշակերտը հասկանում է ինչքանով է ինքը նյութը յուրացրել և ինչու արժանացավ տվյալ գնահատականին:

Հաճախ իմ դասերին օգտագործում եմ փոխադարձ գնահատման ձևը: Դասարանը բաժանում եմ երկու խմբի և հանձնարարում եմ որևէ առաջադրանք,այնուհետև մեկ խումբը ստուգում է մյուս խմբի առաջադրանքի արդյունքը և գնահատում: Ասեմ, որ աշակերտները շատ ազնիվ և օբյեկտիվ են գնահատման հարցում: Հայոց լեզվի դասերին հաճախ եմ ուսուցողական փոքրիկ թելադրություններ տալիս և մեկ սովորողը ստուգում է մյուս սովորողի գրավորը: Այս մեթոդը նպաստում է նաև ուրիշի սխալը գտնել կարողանալուն: Նպաստում է, որ տվյալ աշակերտը հասկանա ինքը ինչքան գիտի, որ կարողանա ճիշտ ստուգել դասընկերոջ աշխատանքը: Եվ կաշխատի լրացնել իր չիմացածը՝ հաջորդ անգամ ավելի ճիշտ աշխատելու համար: Դասավանդման որոշ մեթոդներ նույնպես նպաստում են աշակերտների ուսումնառության և մոտիվացիայի բարձրացմանը: Օրինակ երբեմն կիրառում եմ մեկ աշակերտի ինձ հետ դաս վարելու մեթոդը, որտեղ աշակերտը հստակ պատկերացնում է առաջադրանքը, գնահատման սանդղակը և կարողանում է ըստ այդմ ռեալ գնահատել համադասարանցիներին: Նման դասերից հետո աշակերտները ձգտում են առավել լավ յուրացնել նյութը և կարևորել ոչ թե միավորային գնահատականը, այլ գիտելիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրակացության, որ ճիշտ գնահատումը, յուրաքանչյուր աշակերտին անհատական մոտեցումը նպաստում են, որ աշակերտը ոգևորվի և լրացնի գիտելիքների պաշարը: Որ ուսուցիչը գնահատականով պետք է խրախուսի աշակերտին և ստիպի ձգտել առավելագույնին: Որ գնահատումը ոչ թե պատժի միջոց լինի, այլ խրախուսման: Աշակերտը պետք է հասկանա, որ գնահատականը արտահայտում է իր գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակը և վստահի ուսուցչին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, Մանկավարժություն, 2009թ.:
2. ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, Մարդ և հասարակություն, 2009թ.:
3. ԿԶՆԱԿ հիմնադրամ, պաշարների շտեմարան: